«Ոստիկանության մասին» օրենքում փոփոխությունների և լրացումների ինկորպորացիա

Հոդված 2. Ոստիկանության խնդիրները

Ոստիկանության խնդիրներն են օրենքին համապատասխան ապահովել՝

1) մարդու անվտանգությունը՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում.

2) հանցագործությունների ու վարչական իրավախախտումների նախականխումը, կանխումը և խափանումը.

3) հանցագործությունների հայտնաբերումը և բացահայտումը, քրեական գործով նախնական քննությունը.

4) հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգությունը.

4.1.) ճանապարհային երթևեկության անվտանգությունը.

5) սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանությունը.

6) սույն օրենքով նախատեսված սահմաններում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրենց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելիս օգնություն ցույց տալը:

Ոստիկանության վրա այլ խնդիրներ կարող են դրվել միայն սույն օրենքով:

…

Հոդված 11. Ոստիկանության պարտականությունները հանցագործությունների և այլ իրավախախտումների դեմ պայքարելիս

Ոստիկանությունը օրենքով սահմանված կարգով և դեպքերում պարտավոր է՝

(…)

7) աջակցել՝

ա) պատգամավորներին, պաշտոնատար անձանց իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս, եթե առանձին քաղաքացիներ չեն ենթարկվում այդ անձանց օրինական պահանջներին կամ խոչընդոտում են նրանց պաշտոնեական գործունեության իրականացմանը,

բ) ազգային անվտանգության մարմիններին՝ պետական իշխանության դեմ ուղղված ծանր հանցագործությունների դեմ պայքարելիս և ազգային անվտանգությանն ուղղված այլ միջոցառումներ իրականացնելիս,

գ) զինվորական կոմիսարիատներին՝ զինակոչային հաշվառումներ, հավաքներ և զորակոչեր իրականացնելիս,

դ) դատախազությանը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական կազմակերպություններին՝ իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս

ե) քրեական վարույթն իրականացնող մարմիններին՝ քննչական և դատավարական գործողությունների կատարման ընթացքում:

…

Հոդված 12. Ոստիկանության պարտականությունները հասարակական կարգը պահպանելիս

Ոստիկանությունը պարտավոր է ապահովել հասարակական կարգի պահպանությունը փողոցներում, հրապարակներում, զբոսայգիներում և երկաթուղային կայարաններում, օդանավակայաններում, ընտրական տեղամասերում, այլ հասարակական վայրերում, դատական նիստերի ընթացքում (դատարանների միջնորդությամբ)՝ միջոցներ ձեռնարկելով հասարակական կարգի խախտումները նախականխելու, կանխելու և խափանելու ուղղությամբ:

Հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս ոստիկանության ծառայողները պարտավոր են կրել սահմանված ձևի համազգեստ, որի վրա տեսանելի մասում փակցվում են ոստիկանության ծառայողին անձնապես նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշաններ:

Ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը, պարեկապահակետային ծառայության կանոնագիրքը հաստատում է Կառավարությունը: Ոստիկանության պարեկային ծառայության կանոնագիրքը հաստատում է Ոստիկանության պետը: